ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

02.07.2025թ. N 02/16.4/10669-2025

«Աքսել» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության տնօրեն
պարոն Արշակ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ
էլ.փոստի հասցե՝ am.llc24@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի (ամբողջությամբ) լուծելու մասին

Հարգելի պարոն Ղուկասյան

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Աքսել» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2025 թվականի փետրվարի 7-ին կնքվել է կենցաղային սառնարանների մատակարարման N ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/8-2 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրով ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 2025 թվականի մարտի 31-ը ներառյալ, սակայն մինչ օրս Ընկերությունը մատակարարում չի կատարել:

Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացրած գրությունը և Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ Պատվիրատուն Ընկերության հետ կնքած Պայմանագիրը 2025 թվականի հուլիսի 2-ից միակողմանիորեն լուծում է:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ Պայմանագիրը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումը 2025 թվականի հուլիսի 2-ին կտեղադրվի տեղեկագրում, որին հաջորդող տասներորդ օրացուցային օրը կկայացվի Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումն Ընկերությանը գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

(այսուհետ՝ Ցուցակ) ներառելու մասին: Որոշումը կայացվելուն հաջորդող օրն այն գրավոր կտրամադրվի լիազորված մարմնին և Ընկերությանը:

Եթե մինչև Պատվիրատուի ղեկավարի որոշման կայացման վերջնաժամկետը լրանալու օրը, համաձայն ներքոնշյալ աղյուսակի, ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի հաշվեհամարներին Ընկերության կողմից վճարվեն պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ապա Պատվիրատուն Ընկերությանը Ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազորված մարմին:

Պայմանագրի ապահովում		Որակավորման ապահովում	
Տուժանքի գումար /ՀՀ դրամ/	Տուժանքի հաշվեհամար	Տուժանքի գումար /ՀՀ դրամ/	Տուժանքի հաշվեհամար
60 000	900005000758	90 000	900008000664

Հարգանքով՝

7/2/2025

X

ԳՈՒՐԳԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Signed by: YEGHIAZARYAN GURGEN 2710630095

Գուրգեն ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ՔԿ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական
հաշվառման վարչության պետ Հասմիկ Բաղինյան, Հեռ: 011621822
Կատարող՝ գնումների կազմակերպման
բաժնի պետ՝ Արայիկ Մնացականյան, Հեռ: 011621722